

Ն Ո Ր Ս Տ Ի Պ Մ Ա Տ Ե Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ.

ԱՆՈՒՍԱՍԻՐԵԱՅ

Ա Մ Բ Ր Ո Ս Ի Ո Ս Վ. Գ Ա Ղ Ֆ Ա Յ Ե Ա Ն.

Իւրաքանչիւր ժողովուրդ իւր ազգային պատմութիւնը սովորելու պարտական է, բայց պատմութիւն մը կայ որ ամենայն քրիստոնէայ ազգաց անհրաժեշտ պարտաւորութիւնն է սովորելը. այս է ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: Վասն զի ոչ միայն հաւատոյ սկզբունքն եւ յաջորդութիւնը, ինչպէս Պօսիւէ կըսէ, այլ եւ ամենայն ազգաց պատմութեան հիմն ու ծագումը պէտք է այս աստուածախօս մատենէն սովորել: Ասոր համար է որ ամենայն դպրոցք եւրոպիոյ՝ մասնաւոր ինամօք կը սովորեցընեն Ս. Գրոց պատմութիւնը. եւ թէպէտ շատ դասագիրքք ալ հանած են այս վախճանաւ, բայց գարձեալ հետզհետէ կ'ջնան տղայոց այս կարեւոր ուսումը դիւրացընել:

Մեր ազգին դպրոցները թէեւ Ս. Գրոց պատմութեան համառօտ դասագրքերէ բոլորովին զուրկ չեն, բայց հարկ է ըսել թէ մինչեւ ցայժմ երեւցած Աստուածաշնչի պատմութիւնները ընդհանրապէս վերիվերանց գրուած են եւ գրեթէ մէկմէկէ օրինակած: Նոր ժամանակիս նոր ոճով պատմութիւն մը հարկաւոր էր որ այժմու եւրոպական ուսմանց կերպովը աւանդէր մեր ազգայնոցը այս կարեւոր ուսումը:

Ահա այս է զոր Գեր. Աւերսոյիս Վարդապետը կընծայէ ազգին իւր նոր Աստուածաշնչի պատմութեամբը: Նորա վախճանն եղած է ոչ միայն տղայոց, այլ եւ մեծահասակ պատանեաց եւ ուսումնասէր ծնողաց ձեռքը տալ հրահանգիչ Ս. Գրոց պատմութիւն մը, յորմէ մտքերնին ամբարեն զայն ամենայն հրահանգըս՝ զոր գիտեր է Աստուած աւանդել իձեան սրբազան Մատենագրաց:

Հեղինակը ամէն ջանք բրած է որ ընթերցողք ոչ միայն հմտանան, այլ եւ խրատ քաղեն իրենց կարգացած ու սովրած պատմութիւնէն: Այս նպատակաւ պէտք եղած տեղերը մեկնութիւններ ու գիտելիքներ աւելցուցած է. ասիէ զատ աշխարհագրական ու հնախօսական ծանօթութիւններով ճոխացուցած է իւր պատմութիւնը:

Վասն զի լաւ հասկըցած է որ առանց այս տեղեկութեանց՝ կարելի չէ որ ընթերցողք եւ ուսանողք լաւ իմանան Ս. Գրոց պատմութեան ոգին՝ եւ ըստ այնմ՝ մտքերնին գաղափար մը կազմեն, գաղափար մը՝ որոյ վրայ պիտի ամբառնայ յետոյ ընդհանուր պատմութեան շէնքը:

Շատ տեղ նոյն իսկ Ս. Գրոց խօսքերը մէջ կըբերէ, որպէս զի ընթերցողք եւ ուսանողք Աստուածաշունչ Ս. Գրոց կենդանի նկարագրութեանցը հմտանան եւ աստուածախօս Մատենագրաց մարգարէական վսեմ խօսքերը մտքերնուն մէջ որոճեն:

Պատմութիւնը որչափ կարելի է զուարճալի ընելու համար հեղինակը վայելուչ պատկերներով ալ զարդարած է զայն. վասն զի պատկերները շատ անգամ կ'օգնեն ընթերցողաց որ կարգացած պատմութիւննին լաւ ըմբռնեն եւ մտքերնէն չհանեն:

Այս պատկերներով նաեւ հայր մը ու բարեպաշտ մայր մը կընայ իւր գրկի տղուն սովորեցընել Ս. Գրոց պատմութիւնը, ու անջրնջելի տպաւորել նորա մտքին մէջ: — Հեղինակը իւր ընծայականաւ կ'իմացընէ որ ինքն ալ իսկզբան այս կերպով սովորէ է, ուստի իւր այս նոր երկասիրութիւնը կընծայէ իրաւամբ իյիշատակ ծնողին իւրոյ, «Յոյր գիրկս որդեգորովս ուսայն իմանկութեան գտորս գիրս եւ գիրսնսնգս աստուածպաշտութեան» կըսէ:

Կիսախաբիմք որ ամենայն ծնողք արժանի լինին այս շնորհակալութիւնն ընդունելու օր մը իրենց երախտագէտ զաւակներէն: Եւ իրօք այսուհետեւ շատ կ'գիւրանայ նոցա աշխատութիւնը, որովհետեւ հեղինակը նոցա ձեռքը այսպիսի առաջնորդ մը կ'ուսայ:

Իվախճանի, աւելորդ չեմք համարիր այս նոր Պատմութեան ընթացքէն քանի մը պատկեր գնել հետեւեալ երեսը, յորոց ընթերցողք կարենան գուշակել նաեւ միւս բազմաթիւ պատկերները՝ որով զարդարուած է այս նորատիպ Ս. Գրոց Պատմութիւնը:



ՔԻՆԵՆ.



ԲԱՆՈՒ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ.



ՏՈՒՐԱ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ.



ՏՈՒՐԱ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ ԿՈՒՆ ԶԱՅԱՏԱԿԱԿԱՆ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ ԿՈՒՆ ԶԱՅԱՏԱԿԱԿԱՆ.



ՆՈՐԱՆԻ ԲԱՆՈՒԿԻՆ.